ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

N Ե-1404/24
30 սեպտեմբեր 2024թ.

«ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Գ. ՌՈՒԲԵՆՅԱՆԻՆ

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Ռուբենյան

Հայտնում եմ, որ Բյուրեղավանի համայնքապետարանի և «ՍՏՐՈՅ-ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն - «ԱՐՏ ՊԼԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն կոնսորցիումի (այսուհետ՝ Կոնսորցիում) միջև 2024 թվականի մարտի 15-ին կնքված N ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-24/12 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում ընկերությունը պետք է իրականացներ Բյուրեղավան համայնքի ոռոգման ցանցի վերանորոգման և կառուցման աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանքներ)՝ 2024 թվականի ապրիլի 01-ից 110 օրացույցային օրվա ընթացքում: Ըստ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված զեկուցագրի (կցվում է)՝ կոնսորցիումը չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ պայմանագրով սահմանված ժամկետում կոնսորցիումը չի կատարել Բյուրեղավան համայնքի ոռոգման ցանցի վերանորոգման և կառուցման աշխատանքները:

Քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4-րդ կետի «բ» պարբերությունը՝ Բյուրեղավանի համայնքապետարանը միակողմանի լուծում է N ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-24/12 ծածկագրով պայմանագիրն ամբողջությամբ:

Տեղեկացնում եմ, որ կապալառուն պարտավոր է սույն ծանուցումն ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Բյուրեղավանի համայնքապետարանի գանձապետական 900102001014 հաշվեհամարին փոխանցելով 479400 (չորս հարյուր յոթանասունինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2-րդ կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 25.09.2024թ. (աշխատանքի կատարման ուշացում 47 աշխատանքային օր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում վճարման ենթակա՝ պայմանագրի որակավորման ապահովման գումարը կազմում է 4601058 (չորս միլիոն վեց հարյուր մեկ հազար հիսունութ) ՀՀ դրամ, պայմանագրի ապահովման գումարը՝ 3067772 (երեք միլիոն վաթսունյոթ հազար յոթ հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամ, որոնք պետք է վճարվեն Բյուրեղավան համայնքապետարանի գանձապետական 900105202064 հաշվեհամարին:

Միաժամանակ հայտնում եմ, որ եթե մինչև 2024 թվականի հոկտեմբերի 07-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ապա կոնսորցիումը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024 թվականի հոկտեմբերի 07-ը ներառյալ պետք է ներկայացվեն Բյուրեղավանի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման ծրագրերի կազմման և համակարգման բաժին:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

Կատ՝. Վ. Մարտիրոսյան
հեռ. (0222) 6 52 03